

## Հայտարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում փորձագետ ներգրավելու համար

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019թ .

Ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի փորձագետ

### 1. Ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչություն ներկայացված երկրաբանական տեղեկատվության արժանահավատության գնահատման, մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման և վերագնահատման նյութերի փորձաքննության իրականացում և համապատասխան կոննիցիաների պարամետրերի հաստատման վերաբերյալ մասնագիտական կարծիքի ներկայացում:

### 2. Փորձագետ ներգրավելու ժամկետն է՝ մինչև մեկ տարի:

### 3. Փորձագետի պարտականությունները՝

Փորձաքննվող նյութերը գնահատել, մասնագիտական կարծիք ձևավորել և կազմել փորձագիտական եզրակացություն ստորև բերված հարցերի վերաբերյալ.

- 1) օգտակար հանածոյի որակատեսիլնորոգիական հատկությունների,
- 2) հանքավայրի շահագործման նախատեսվող եղանակի, բացման սխեմայի և մշակման համակարգի,
- 3) հանքավայրի շահագործման բնական պայմանների (հիդրոերկրաբանական ինժեներաերկրաբանական, լեռնաերկրաբանական, ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական, բնապահպանական և այլն),
- 4) օգտակար հանածոյի վերամշակման տեխնոլոգիական սխեմայի,
- 5) հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիմնավորվածության,
- 6) կոննիցիաների պարամետրերի կազմի ու չափաքանակների հիմնավորվածության:

### 4. Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- 072401.00.7. Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում (մագիստրոս) մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
- առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ,
- հեղինակ կամ համահեղինակ է նվազագույնը երեք մետաղական հանքավայրերի՝ կոննիցիաների պարամետրերի հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի,
- տիրապետում է ռուսերենին (ազատ),
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

5. Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ 09 օգոստոսի 2019թ.

**6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն՝**

Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3

Հեռ.՝ +374 11 523734

Էլ. հասցե՝ <http://mtad.am>

7. **Չի թույլատրվում** հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիսաբեկում, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

**8. Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին
- տվյալ աշխատանքին անցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

9. Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրությունը:

10. Դիմողը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և բոլոր փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: հեռ. +374 10 511355, +374 11 523734